ՆԱՄԱԿ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻՑ

Շուշիում պետք է հայն ապրի...

Այս նամակի հեղինակը մինչև 1989-ը եղել է Շուշիի Խ. Աբովյանի անվան միջնակարգ դպրոցի դիրեկտորը, տղան՝ շրջկոմի երկրորդ քարտուղարը։ Ներկայումս նրանք երկուսն էլ մահվան սպառնալիքի տակ լքել են իրենց նախնիների հիմնած քաղաքը...

Հարգելի խմբագիր։

Դուք լավատեղյակ եք, թե ինչ ապրեցին շուշեցիները 1988 թվականի փետրվարից մինչև սեպտեմբեր ու առ այսօր։ Իմ ընտանիքի յուրաքանչյուր անդամի, ամեն շուշեցու համար շատ ծանր էր թողնել այն ամենը, ինչը հարազատ ու թանկ է եղել, ինչն ստեղծվել է, ապրվել հոգով-սրտով, նվիրումով, հայապահպանության, գոյատևման հեռանկարներով։ Մեր միակ դավանանքն է՝ Շուշիում պետք է հայն ապրի։ Այդ սուրբ գործում ես ներդրել եմ իմ էությունը, գիտակցական ողջ կյանքս, նույնը ներարկել զավակներիս-ու թոռներիս, աշակերտներիս, համաքաղաքացիներիս։ Այդպես վարվեցի նաև 1988 թվականի սեպտեմբերի 19-ի չարաբաստիկ օրը, երբ խառնամբոխի հրամանին հնազանդված «քաղաքակիրթ, բարեկիրթ պաշտոնյաները» հորդորում էին շուշեցիներին երկու օրվա ընթացքում թողնել քաղաքը։ Մի կերպ ես կարողացա հայտնել դպրոցի կազմակերպչին, հաջորդ օրը վերսկսել վայրենաբար դադարեցված դասերը (սեպտեմբերի 19, 3 դասաժամ)։ Բայց աշխարհի չարն ու բարին տեսած 78 տարիներիս բարձունքում չէի կարող երևակայել այնքան բիրտ բարբարոսություն, ինչպիսին «տեղահանություն» կոչվածն է, որի ահ ու սարսափից իր հոգու տերը, իր երկրի տերը, խեղճանում ու նվաստանում են խոստովանել, միայն կենդանի մնալու համար թողնում ու հեռանում է հարազատ եզերքից և այն էլ «խորհրդային» կոչվող երկրում և Արցախում դառնում փախստական...

Հարգելի խմբագիր, իմ բարձրագույն նպատակն էր հայակերտ Շուշին և հայկական արքայական կառույցները՝ ռեալական ուսումնարանը, Ղազանչեցոց եկեղեցին, Մարիամյան օրիորդաց դպրոցը, Ժամհարյանների հին վանդանոցը և հայկական չորս գերեզմանոցները չթողնել որբացած։ Հայության հևքը, սրտի տրոփը պահպանել այդ քաղաքում։ Բայց հիմա ի՞նչ փառք ենք տալիս աստծուն, որ փրկված ենք... Ցնորեցնող ցավ, ցնորեցնող տառապանք, մղձավանջ...

Մեր Շուշիում այսօր տեր ու տնօրինություն են անում մի խումբ ուռճացած ամբոխավարներ ու «բերված» տգետ եկուզակներ, բաժան-բաժան անում հայերի հրաշք այգիները։

Շուշեցի փախստականներիս, խոսք չկա, Ստեփանակերտի մարզային մարմինները զորավիգ եղան, տեղավորեցին, հնարավոր ամեն պայման ընձեռեցին։ Աղայանի անվան դպրոցում նորից ղողանջեց մեր՝ Խ. Աբովյանի անվան դպրոցի բարեբախտաբար ընդհատված զանգը։ 75 աշակերտներով վերսկսեցինք դասերը, շուշեցի շրջանավարտներ տվեցինք, նույնիսկ մեկ ոսկե մեդալակիր ունեցանք։ Բայց, գիտե՞ք, որքան էլ հոգածու և նվիրյալ ափերի մեջ լինենք, որքան էլ «խաղաղ» բացվեն առավոտները, մեր նոր տների պատշգամբներից երբ նայում ենք երկնքին, որն ազատ, տիրաբար փռվում է նաև Շուշիի հայկական լքյալ թաղամասերի վրա, անեզր կարոտից, ցավից կծկվում ենք։ Առանց հայի Շուշի չկա։

Վճռականորեն պիտի դրվի նաև ավերված, հոգով բզկտված ու խռով քաղաքի՝ Շուշիի ճակատագրի հետագա տնօրինման հարցը։ Շուշիում հայը պետք է ապրի, հայկական Շուշին պետք է գոյատևի...

Արսեն ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ստեփանակերտ